ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներդրումային քաղաքականություն
2. Օտարերկրյա ներդրումները կարգավորող համակարգ
3. Ներդրումային երկկողմ և բազմակողմ համաձայնագրեր
4. Ներդրումային վեճերի կարգավորում
5. Առևտրային ռեժիմ
6. ԱՀԿ անդամակցության առավելություններ
7. Հայաստանի ինստիտուցիոնալ և ներդրումային միջավայրի գնահատումը միջազգային կազմակերպությունների կողմից
8. Օտարերկրյա ներդրումների վիճակը ՀՀ-ում
9. Ներդրումային միջավայրի բարելավում
10. Ներդրումային քաղաքականության մշակման և իրականացման համար պատասխանատու գերատեսչություններ և կազմակերպություններ

1. Ներդրումային քաղաքականություն

Հայաստանի կառավարությունը ներդրումային քաղաքականությունը դիտարկում է որպես իր տնտեսական զարգացման ուղու կարևորագույն ուղղություններից մեկը: Կառավարությունը խիստ կարևորում է մասնավոր ներդրումների, այդ թվում՝ օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) ներգրավումը, որը կխթանի արդյունաբերության, ինչպես նաև տնտեսության այլ ոլորտների զարգացումը: Այս քաղաքականության բարեհաջող իրականացման արդյունքում վերջին 10 տարիների ընթացքում ձեռք է բերվել կայուն տնտեսական աճ: Աճի միջին ցուցանիշը 2001-2007թթ. կազմել է ավելի քան 12%՝ արտացոլվելով ՀՆԱ-ի կայուն աճի մեջ (2001թ.՝ 9.6%, 2002թ.՝ 12.9%, 2003թ. 13.9%, 2004թ.՝ 10.1%, 2005թ.՝ 13,9%, 2006թ.՝ 13.4%, 2007թ.՝ 13.7%), ինչպես նաև արտահանման ծավալների քանակական և որակական կտրուկ աճի մեջ (2000թ.՝ 28.4%, 2001թ.՝ 14.1%, 2002թ.՝ 48.5%, 2003թ. 30.5%, 2004թ.՝ 4.3%, 2005թ.՝ 31.5%, 2006թ.՝ 3.1%, 2007թ.՝ 17.5%): Այս միտումները պահպանելու և տնտեսական հետագա զարգացումը խթանելու նպատակով Հայաստանի կառավարությունը, կարևորելով մասնավոր ներդրումների դերը, որդեգրել է հնգասպեկտ մոտեցում.

1. Ներդրողների համար ստեղծել բարենպաստ միջավայր տնտեսության բոլոր ոլորտներում՝ ապահովելով կայուն և կանխատեսելի պայմաններ բիզնես գործարքների և ներդրումների պատշաճ իրավական պաշտպանության համար:

2. Նվազեցնել օտարերկրյա և տեղական ներդրումների հոսքերի ռիսկերը՝ վերացնելով հարկային և մյուս կարգավորող ու վարչական խոչընդոտները:

3. Ներգրավել Անդրազգային կորպորացիաները (ԱԱԿ)՝ գլոբալիզացվող համաշխարհային տնտեսության մեջ Հայաստանի դերը մեծացնելու նպատակով:

4. Առավել արդյունավետ կերպով (յուրաքանչյուր դեպքի համար առանձին) ավարտին հասցնել մասնավորեցման գործընթացը՝ հաջողակ ներդրողներ ներգրավելու միջոցով:

5. Հետագա տարիների ընթացքում արտահանման բարձր ցուցանիշներ պահպանելու նպատակով Հայաստանի կառավարությունը ջանքեր կգործադրի դիվերսիֆիկացնելու արտահանման կառուցվածքը, քանի որ ներկա կառուցվածքը սահմանափակվում է մի քանի ապրանքային

խմբերով: Արտահանման բարձր ցուցանիշների հասնելու և դրանք պահպանելու համար անհրաժեշտ է բացահայտել և զարգացնել նորարար կլաստերները, ինչպիսիք են՝ գիտահետազոտական կլաստերները և կրթական ծառայությունների առևտրականացումը ՝ արտահանմանն ուղղված ներդրումների, մասնավորապես ԱԱԿ-ների ներգրավման միջոցով:

Այս մոտեցումներից ելնելով՝ Հայաստանը հայտարարել է «Բաց դռների» ներդրումային քաղաքականություն և այս ազատական մոտեցումն արտացոլվել է օրենսդրության մեջ, 1994թ.-ին **«Օտարերկրյա ներդրումների մասին օրենքի»** ընդունմամբ (click-ով բացվի), և տնտեսական օրենքների ներդրումներին վերաբերող այլ դրույթներում: Կարևորելով «Օտարերկրյա ներդրումների մասին օրենքի» դերը տնտեսական զարգացման գործընթացում օտարերկրյա կապիտալի ներգրավման համար՝ կառավարությունը շեշտադրել է ՕՈՒՆ-ների վճռորոշ դերը տնտեսական աճն արագացնելու մեջ և ՕՈՒՆ-ների առավելությունների արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունը Հայաստանի տնտեսության համար:

Կառավարության մոտեցումը հետևյալ ինստիտուցիոնալ և տնտեսական գործոնների հետ միասին Հայաստանը գրավիչ են դարձնում ՕՈՒՆ-ների համար:

Հայաստանում ներդրումներ կատարելու առավելությունները

- Ներդրումները կարգավորող գրավիչ օրենսդրություն
- Ներդրումային երաշխիքներ
- Կառավարության հանձնառություն՝ ուղղված ՕՈՒՆ-ի ներգրավմանը
- Արագ աճող տնտեսություն
- Դյուրին մուտք ԱՊՀ և Միջին Արևելքի շուկաներ
- Լավ կրթված, հմուտ և դյուրին վերապատրաստվող աշխատուժ
- Ոչ մի սահմանափակում անձնակազմի ընտրության հարցում
- Գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող ընկերությունների համար եկամտահարկի արտոնություններ
- Օտարերկրացիների կողմից 100%-ով սեփականության տիրապետման թույլտվություն
- Դրամական փոխանցումների սահմանափակումների բացակայություն
- Կայուն բանկային համակարգ և ազգային արժույթ
- Էներգակիրների մրցունակ արժեք
- Աշխարհասփյուռ հայություն
- Անդամակցություն Առևտրի Համաշխարհային Կազմակերպությանը
- Առևտրի ազատական ռեժիմ, ներմուծման նկատմամբ քանակական սահմանափակումների և լիցենզիաների բացակայություն
- Արտահանման տուրքերի բացակայություն և արտահանված ապրանքների և ծառայությունների համար ԱԱՀ-ի հետ վերադարձ
- Արտարժույթի ազատ փոխանակում
- Շահույթի ազատ հայրենադարձում

- Քաղաքական և տնտեսական կայունություն

Ներդրումների համար շահավետ ոլորտներ

- Բարձր տեխնոլոգիական էլեկտրոնիկայի նախագծում
- Հանքարդյունաբերություն և մետալուրգիա
- Ֆինանսական միջնորդություն (բանկային ծառայություններ)
- Բիզնես ծառայություններ
- Առողջապահական և կրթական ծառայություններ
- Համակարգչային ծրագրային ապահովման մշակում
- Սննդի արտադրություն և փաթեթավորում
- Զբոսաշրջություն
- Վերականգնվող էներգետիկա
- Քիմիական արդյունաբերություն
- Թեթև արդյունաբերություն

2. Օտարերկրյա ներդրումները կարգավորող համակարգ

Վերջին 10 տարիների ընթացքում Հայաստանում գրանցվել է հիմնական տնտեսական ցուցանիշների շարունակական աճ, և ավելին, կառավարությունը հստակ պատկերացնում է տնտեսական զարգացման ռազմավարությունները և ներկայումս մշակում է իր տնտեսական ռազմավարության քաղաքականությունը գալիք տասնամյակի համար: Այս առումով Հայաստանը գիտակցել է ներդրումների և ներդրողների պաշտպանության կարևորությունը և մշակել է իրավական այնպիսի համակարգ, որը Հայաստանը գրավիչ է դարձնում օտարերկրյա ներդրումների համար:

Ամերիկյան Փաստաբանների Ասոցիացիայի գնահատմամբ (զեկույց՝ «Հայաստանում օտարերկրյա ուղղակի ներդրումները խոչընդոտող գործոնների ուսումնասիրության մասին», սեպտեմբեր, 1998թ.)՝ «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքը հանդիսանում է օտարերկրյա ներդրումների մասին ամենաառաջատար և ազատական օրենքը, որ գոյություն ունի անցումային շրջանում գտնվող տնտեսություններում: Օրենքը.

- երաշխավորում է հավասար վերաբերմունք օտարերկրյա և տեղական ներդրումների նկատմամբ,
- զգալիորեն սահմանափակում է պետության կողմից ունեցվածքի բռնագրավման հնարավորությունը,
- պահանջում է լրիվ փոխհատուցում պետության կողմից ազգայնացման կամ բռնագրավման դեպքում,
- տալիս է օտարերկրյա ներդրումներ կատարելու հնարավորություններ տնտեսության տարբեր ոլորտներում և տարբեր ձևերով,

- հինգ տարի ժամկետով պաշտպանում է ներդրումներն օրենսդրական անբարենպաստ փոփոխությունների դեպքում,
- տրամադրում է հայաստանյան և միջազգային դատարաններ դիմելու հնարավորություն՝ տնտեսական վեճերը լուծելու նպատակով,
- տալիս է շահույթների և սեփականության լրիվ հայրենադարձման հնարավորություն,
- պաշտպանում է մտավոր սեփականությունը,
- ապահովում է մի շարք այլ իրավունքներ և արտոնություններ, որոնք օտարերկրյա ներդրողների կողմից դիտվում են որպես կարևոր, եթե ոչ հիմնական:

Հիմնելով ամբողջովին օտարերկրյա սեփականություն հանդիսացող ընկերություններ, բաժանմունքներ, մասնաճյուղեր, ներկայացուցչական գրասենյակներ, նոր համատեղ ձեռնարկություններ և գնելով Հայաստանում տարբեր տեսակի արժեթղթեր՝ օտարերկրյա ներդրողներն ազատ են կատարել ներդրումներ, այդ թվում՝ անշարժ գույքի, արժեթղթերի, համաշխարհային արժույթների, ներառյալ՝ ՀՀ դրամի, դրամական պարտավորագրերի կամ պարտավորությունների կատարման համար արված այլ պարտավորագրերի, մտավոր սեփականության ցանկացած ձևի իրավունքների և օրենսդրությամբ կամ Հայաստանի Հանրապետության հետ կնքված համաձայնագրով նախատեսված ցանկացած այլ տնտեսական գործունեություն: Ընկերության գրանցման գործընթացը Հայաստանում տևում է 2-7 օր:

ՀՀ կառավարության 2005թ. ապրիլի 21-ի թիվ 15 նիստի արձանագրային որոշմամբ հաստատվել է **«ՀՀ ներդրումային քաղաքականության» Հայեցակարգը** (click-ով բացվի), որը մշակել և ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացրել ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունը: Հայեցակարգի հիմանական նպատակն է՝ բարձրացնել ՀՀ ներդրումային քաղաքականության թափանցիկությունը, ամրագրել վերջինիս հիմնական սկզբունքները և ուղղությունները:

3. Ներդրումային համաձայնագրեր

Ի լրումն օրենսդրության՝ Հայաստանը ստորագրել է «Ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին» երկկողմ Համաձայնագրեր 37 երկրների հետ:

Հայաստանում ներդրողների համար ստեղծվել են բարենպաստ պայմաններ, մասնավորապես ներդրումների անձեռնմխելիություն, ծագած վեճերի լուծման հնարավորություն միջազգային միջնորդ դատարաններում, ազատ դրամական փոխանցումների հնարավորություն, որոնք սահմանված են միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին երկկողմ համաձայնագրեր

N	*Պետություն*	*Ստորագրված է*	*Վավերացված է*	*Ուժի մեջ է մտել*
1	Արգենտինա	16.04.1993	27.09.1993	10.10.1994
2	Ավստրիա	17.10.2001	09.10.2002	01.02.2003
3	ԱՄՆ	23.09.1992	26.09.1995	29.03.1996
4	Բուլղարիա	10.04.1995	29.08.1995	27.03.1996
5	Բելգիա-Լյուքսեմբուրգ	07.06.2001	20.02.2002	19.12.2003
6	ԳԴՀ	21.12.1995	23.06.1997	04.08.2000
7	Իրան	06.05.1995	14.11.1995	26.02.1997
8	Լիբանան	01.05.1995	29.08.1995	01.10.1998
9	Կանադա	08.05.1997	17.03.1999	29.03.1999
10	Կիպրոս	18.01.1995	12.06.1996	03.08.1998
11	Հնդկաստան	23.05.2003	27.04.2004	30.05.2006
12	Հունաստան	25.05.1993	13.10.1993	28.04.1995
13	Դրոզստան	04.07.1994	29.08.1995	26.11.1995
14	Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն	27.05.1993	13.10.1993	11.07.1996
15	ՉԺՀ	04.07.1992	06.10.1992	17.03.1993
16	Ռումինիա	20.09.1994	11.10.1995	24.12.1995
17	Վիետնամ	01.02.1993	28.04.1993	
18	Վրաստան	04.06.1996	18.02.1997	18.01.1999
19	Ուկրաինա	07.10.1994	16.01.1996	07.03.1996
20	Ֆրանսիա	04.11.1995	05.08.1996	21.06.1997
21	Իտալիա	23.07.1998	11.10.2000	12.12.2000
22	Շվեյցարիա	19.11.1998	09.10.2002	04.11.2002
23	Իսրաել	19.01.2000	21.03.2001	25.06.2003
24	Կատար	22.04.2002	23.10.2002	08.10.2007
25	Թաջիկստան	03.04.2002	04.11.2002	18.11.2002
26	Ռուսաստանի Դաշնություն	15.09.2001	02.12.2005	08.02.2006
27	Բելառուս	26.05.2001	21.11.2001	10.02.2002
28	ԱՄԷ	20.04.2002	04.11.2002	
29	Ուրուգվայ	06.05.2002	25.03.2003	
30	Ֆինլանդիա	05.10.2004	27.02.2007	20.04.2007
31	Թուրքմենստան	19.03.1996		
32	Եգիպտոս	09.06.1996	08.12.2005	21.02.2006

33	Նիդերլանդներ	10.06.2005	02.12.2005	01.08.2006
34	Լատվիա	07.10.2005	27.02.2007	21.04.2007
35	Շվեդիա	08.02.2006	25.02.2008	
36	Լիտվա	25.04.2006	27.02.2007	16.03.2007
37	Ղազախստան	06.11.2006	25.02.2008	
	Ընդամենը	**37**	**36**	**31**

4. Ներդրումային վեճերի կարգավորում

Լուրջ ձեռքբերում է հանդիսանում այն, որ առանձնացվել են տնտեսական դատարանները և այժմ մասնագիտանում են տնտեսական գործերի դատավարման մեջ: Ավելին, Հայաստանը հանդիսանում է «Պետությունների և այլ Պետությունների Քաղաքացիների միջև Ներդրումային Վեճերի Կարգավորման մասին» Կոնվենցիան ստորագրած երկիր և հանդիսանում է Ներդրումային Վեճերի Կարգավորման Միջազգային Կենտրոնի (ՆՎԿՄԿ) անդամ: Այն լրացուցիչ վստահություն է ներշնչում օտարերկրյա ներդրողներին՝ ապահովելով ներդրումային վեճերի արագ, արդյունավետ և որակյալ լուծում:

5. Առևտրային ռեժիմ

Հայաստանն ունի ազատականացված արտաքին առևտրային ռեժիմ, որը ներառում է ներմուծման ժամանակ կիրառվող պարզեցված երկտարիֆային համակարգ (0% և 10%), չհարկվող արտահանում և չկան առևտրի քանակական սահմանափակումներ: Ներմուծման, արտահանման և տեղական ապրանքների արտադրության համար լիցենզիաներ պահանջվում են միայն առողջապահական, անվտանգության և էկոլոգիական նկատառումներով: Չկան սահմանափակումներ ներմուծվող կանխիկ արժույթի հանդեպ:
Նոր Մաքսային օրենսգիրքը, որը ուժի մեջ է մտել 2001թ. հունվարի 1-ին, պարզեցնում է մաքսային ընթացակարգերը և համապատասխանում է ԱՀԿ-ի կանոններին: Մաքսային կարգավորումների հիմնական առանձնահատկությունները հետևյալն են՝

- Արտահանումը Հայաստանից ազատված է մաքսատուրքից:
- Ներմուծման մաքսատուրքի դրույքաչափերը 0% կամ 10% են: 10% դրույքաչափ է գանձվում գլխավորապես սպառողական և թանկարժեք ապրանքներից:
- Մաքսատուրքը հաշվարկվում է ապրանքի գնի մեթոդով, CIF արժեքին համապատասխան:
- Ներմուծման ժամանակ մաքսատուրքեր չեն վճարվում հետևյալ դեպքերում՝
  - Ներմուծված արտադրական նշանակության ապրանքները (ներառված ՀՀ Կառավարության կողմից սահմանված ցանկում), որոնք կազմում են բիզնեսի մեջ կատարվող ներդրումների մի մասը:
  - Հայաստանի տարածքով փոխադրվող տարանցիկ ապրանքները:

- Տրանսպորտային միջոցներ (օրինակ՝ բեռնատար ավտոմեքենա), որոնք օգտագործվում են միջպետական կանոնավոր բեռնափոխադրումներ իրականացնելու համար:
- Արժույթներ և բաժնետոմսեր:
- Մշակման և վերամշակման համար Հայաստան ժամանակավորապես ներմուծվող և Հայաստանից ժամանակավորապես արտահանվող ապրանքներ:

➢ Բոլոր վճարումները պետք է կատարվեն Հայաստանի ազգային արժույթով:

Հայաստանը Ազատ Առևտրի Համաձայնագրեր է ստորագրել Վրաստանի, Բելառուսի, Ղազախստան, Ղրղզստանի, Մոլդովայի, ՌԴ-ի, Տաջիկստանի, Թուրքմենստանի և Ուկրաինայի հետ, որոնց միջև իրականացվող ապրանքների առևտուրը ազատված է մաքսատուրքերի վճարումից: Տարբեր դրույքաչափերով ակցիզային հարկեր են գանձվում որոշ ապրանքների ներմուծման կամ արտադրության համար, ներառյալ՝ ալկոհոլային խմիչքները, ծխախոտը և բենզինը:

Համաձայն Հերիթիջ Հիմնադրամի/Ուոլլ Սթրիթ ամսագրի անցկացրած հետազոտության՝ Հայաստանն ունի ամենաազատականացված ներդրումային և առևտրային ռեժիմը ԱՊՀ երկրների շրջանում (տես ստորև):

6. ԱՀԿ անդամակցության առավելությունները

Հայաստանի Հանրապետությունը դարձել է ԱՀԿ-ի անդամ 2003թ.-ի փետրվարին: ԱՀԿ-ի նկատմամբ պարտավորությունները ներառում են առևտրի և ներդրումների զգալի ազատականացումը, որն իր ազդեցությունը կունենա օտարերկրյա և տեղական ներդրումների հոսքերի վրա: Հայաստանի անդամակցությունն ԱՀԿ-ին երկրի տնտեսությունն առավել գրավիչ կդարձնի օտարերկրյա ներդրողների համար: Հայաստանը հանձն է առել ազատականացնել կարգավորող համակարգը արդյունաբերության մի շարք ճյուղերի համար, այդ թվում՝ բիզնես ծառայություններ, հաղորդակցություն, կրթություն, ֆինանսական ծառայություններ, առողջապահական և սոցիալական ծառայություններ, օդային տրանսպորտի ծառայություններ: ԱՀԿ-ին անդամակցությունը ոչ միայն կներգրավի նոր ներդրողների, այլ նաև համատեղ ձեռնարկությունների օտարերկրյա գործընկերներին հնարավորություն կտա ավելացնելու իրենց սեփական բաժնետոմսերն առկա մասնաճյուղերում: Այնուամենայնիվ, ԱՀԿ-ին անդամակցությունը շուտափույթ արդյունք կարող է չունենալ ՕՈՒՆ-ների նշանակալից խթանման առումով: Սակայն, ժամանակի ընթացքում արտադրությանը անհրաժեշտ սարքավորումների ներմուծման ավելի ազատ հնարավորությունները կարող են օգնել բարելավել գնի համեմատ որակյալ արտադրանք ապահովող պայմաններ և մեծացնել տնտեսության գրավչությունը՝ որպես արդյունավետությանն ուղղված արտադրության ՕՈՒՆ-ների վայր:

Այսպիսով՝ ԱՀԿ-ին անդամակցությունը Հայաստանի տնտեսությունը կդարձնի ավելի գրավիչ: Սպասարկման ոլորտը կփոխարինի արտադրությանը, որպես շարժիչ՝ ՕՈՒՆ-ների ներգրավման

համար: Արտադրության ոլորտում ՕՈՒՆ-ը շատ ավելի վճռորոշ դեր կխաղան վերակառուցման և ամրապնդման գործընթացում՝ նոր և ավելի մեծ մրցակցություն պահանջող միջավայրում: Քանի որ ՕՈՒՆ-ների ռեժիմը աստիճանաբար ազատականացվելու է, թե՛ ներհոսքը, թե՛ արտահոսքը, ամենայն հավանականությամբ, կհասնեն նոր և ավելի բարձր մակարդակի:

7. Հայաստանի ինստիտուցիոնալ և ներդրումային միջավայրի գնահատումը միջազգային կազմակերպությունների կողմից

Սկսած 1995թ.-ից՝ «Ուոլ Սթրիթ Ջորնըլ»-ը և Հերիթիջ հիմնադրամը իրականացնում են ամենամյա խորը քննություն այն գործոնների, որոնք առավել ուղղակի ազդեցություն են ունենում տնտեսական ազատության և բարգավաճման գործում (Տնտեսական Ազատության Ցուցանիշ): Ընդհանուր տնտեսական ազատությունը պարզելու համար վերլուծության են ենթարկվել հետևյալ գործոնները. առևտուր, հարկային բեռ, պետության միջամտությունը տնտեսության մեջ, դրամային քաղաքականություն, ստվերային շուկա, բանկային գործունեություն և ֆինանսներ, օտարերկրյա ներդրումներ, կարգավորում և այլն (աղյուսակ 1): Ուսումնասիրության մեջ Հայաստանը դասակարգված է որպես «մեծամասամբ ազատ»: Դիտարկման համաձայն՝ տնտեսության մեջ Կառավարության միջամտությունը կարող է բնութագրվել որպես կայուն (չափավոր մակարդակ): Առևտրային քաղաքականությունը գնահատված է կայուն (շատ թույլ պաշտպանություն). ներմուծվող ապրանքները հիմնականում ազատ են քանակական, լիցենզավորման կամ այլ պահանջներից: Կապիտալի/դրամամիջոցների հոսքը և օտարերկրյա ներդրումները նկարագրված են որպես կայուն (փոքր արգելքներ): Հայաստանը տրամադրում է պետական հավասար վերաբերմունք օտարերկրյա ներդրողների նկատմամբ, ովքեր ունեն բիզնես հիմնելու միևնույն իրավունքները, ինչ որ Հայաստանի քաղաքացիները տնտեսության ոլորտների մեծ մասում: Մասնավորեցումն ընթացքի մեջ է և բաց է օտարերկրացիների համար: Ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի՝ Հայաստանը չունի ոչ մի սահմանափակումներ կամ վերահսկումներ արտարժույթային հաշիվների, բանկային գործարքների, ընթացիկ փոխանցումների, շահույթի հայրենադարձման կամ մշտաբնակ կամ ոչ մշտաբնակ անձանց կողմից կատարվող արտաքին և ներքին ուղղակի ներդրումների նկատմամբ:

Աղյուսակ 1: Տնտեսական ազատության ցուցանիշը 2002 – 2008*թթ

Տարվա ընդհանուր դասակարգում 162 երկրների շարքում	Ընդհ. գնահատական	Գործարարության ազատություն	Առևտրի ազատություն	Ֆիսկալ ազատություն	Տնտեսությունում պետ. մասնաբաժին	Դրամավարկային ազատություն	Ներդրումների ազատություն	Ֆինանսական ազատություն	Սեփականության իրավունքներ	Կոռուպցիայից ազատություն	Աշխատուժի ազատություն
2008թ.`28-րդ տեղ	*70.34*	*81.28*	*85.0*	*89.0*	*86.39*	*84.59*	*70.0*	*70.0*	*35.0*	*29.0*	*73.1*
2007թ.`32-րդ տեղ	*69.36*	*80.82*	*85.6*	*89.7*	*90.81*	*80.29*	*60.0*	*70.0*	*30.0*	*29.0*	*77.38*
2006թ.`27-րդ տեղ	*75.02*	*77.59*	*80.6*	*90.0*	*90.71*	*80.63*	*90.0*	*90.0*	*50.0*	*31.0*	*69.62*
2005թ.`42-րդ տեղ	*70.07*	*55.0*	*80.0*	*89.9*	*88.94*	*81.97*	*70.0*	*90.0*	*50.0*	*30.0*	*64.94*
2004թ.` 44-րդ տեղ	*70.35*	*55.0*	*80.0*	*90.0*	*88.71*	*84.47*	*70.0*	*90.0*	*50.0*	*25.0*	-
2003թ.`44-րդ տեղ	*67.32*	*55.0*	*81.2*	*88.9*	*84.13*	*81.7*	*70.0*	*70.0*	*50.0*	*25.0*	-
2002թ.` 45-րդ տեղ	*68.0*	*55.0*	*81.4*	*88.3*	*81.25*	*91.05*	*70.0*	*70.0*	*50.0*	*25.0*	-

* **Հերիթիջ Հիմնադրամի** կողմից Տնտեսական ազատականության ցուցանիշի հաշվարկման մեթոդաբանությունը, ըստ հեղինակների հիմնականում փոփոխվել է և ըստ այդմ երկրներին նախորդ տարիներին տրված ցուցանիշները համապատասխանեցվել են նոր մեթոդաբանությանը: Մասնավորապես, նախկինում ընդհանուր ցուցանիշի հաշվարկման հիմք ծառայող 10 ենթացուցանիշները փոփոխվել կամ խմբավորվել են, իսկ դրանց գնահատման մեխանիզմը (5-1 սանդղակի մեխանիզմը, որտեղ 1-ը լավագույն գնահատականն էր, փոփոխվել է 0-100 սանդղակի, որտեղ 100-ը լավագույն գնահատականն է և կարող է ընդունվել, որպես կարգավորման ոլորտի ազատության տոկոսային արտահայտում) փոփոխվել է ավելի ճշգրիտ գնահատականներ ստանալու նպատակով:

Տվյալները՝ ***http://www.heritage.org/index***

ՀԲ-ի «Գործարարությամբ Զբաղվելը» պարբերական ուսումնասիրությունը ներկայացնում է գործարարության իրական կարգավորման և կիրարկման միջոցառումները, այլ խոսքերով՝ դասակարգումը, որը արտահայտում է տվյալ տնտեսությունում գործարարությամբ զբաղվելու դյուրինության աստիճանը: Գործարարությամբ զբաղվելու ցուցանիշները համեմատվում են 178 երկրների տնտեսություններում: Դրանք արտահայտում են գործարարության կանոնակարգիչ արժեքները և կարող են օգտագործել վերլուծելու առանձին կարգավորումներ, որոնք խոչընդոտում են ներդրումներին, արտադրողականությանը և աճին: Յուրաքանչյուր երկրի դասակարգումը որոշվում է 10 բաղադրիչների ուսումնասիրման արդյունքում, այն է՝ ընկերության հիմնադրումը,

շինարարական թույլտվությունները, աշխատուժի կանոնակարգումը, սեփականության գրանցումը, վարկավորումը, ներդրողների պաշտպանությունը, հարկերի վճարումը, անդրսահմանային առևտուրը, պայմանագրերի կիրարկումը, ընկերության փակումը (սնանկությունը): **Հայաստանը 2008թ.-ի Գործարարությամբ Զբաղվելու դասակարգման մեջ 178 երկրների շարքում զբաղեցրել է 39-րդ տեղը:**

8. Օտարերկրյա ներդրումների վիճակը Հայաստանում

1991թ.-ից սկսած օտարեկրյա ներդրումների ներհոսքն աճել է և օտարեկրյա ներդրումների աճի դինամիկան հուսադրող է: 2000թ.-ից մինչև 2007թ. Հայաստանում օտարեկրյա ներդրումների ընդհանուր գումարային ծավալը կազմել է ավելի քան 2.9 մլրդ ԱՄՆ դոլար:



Օտարերկրյա ներդրումների աղբյուր հանդիսացող երկրները հիմնականում հետևյալն են.

N	Երկիր	1991-2007թ.թ. *(մլն ԱՄՆ դոլար)*
1	Ռուսաստան	1 387.8
2	Լիբանան	270.0
3	ԱՄՆ	269.5
4	Գերմանիա	241.9
5	Հունաստան	214.0
6	Ֆրանսիա	191.9
7	Կանադա	155.0

8	Արգենտինա	141.4
9	Մեծ Բրիտանիա	90.8
10	Կիպրոս	72.7

1991թ. սկսած աճել է օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ ընկերությունների թիվը: Ըստ պաշտոնական վիճակագրության՝ 2008թ. հունվարի 1-ի դրությամբ, Հայաստանում հիմնադրվել է օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ 3698 ընկերություն, որոնց մեծ մասը գրանցվել է վերջին տարիների ընթացքում:

2000-2007թթ. Հայաստանում հիմնված օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ ձեռնարկություններ



1991-1997թթ. համատեղ ձեռնարկությունների և ամբողջությամբ օտարերկրյա սեփականություն հանդիսացող ընկերությունների մեծամասնությունը ներգրավված էր ներմուծման-արտահանման գործարքների մեջ, սակայն, սկսած 1998թ.-ից, միտումը տեղական արտադրության և ծառայությունների բնագավառում ներդրումներ կատարելն է:

1998-2007թթ. ժամանակահատվածում օտարերկրյա ներդրումների ծավալում դիտարկվել են կառուցվածքային էական փոփոխություններ: Այս ժամանակահատվածում, երբ մասնավորեցման գործընթացը հիմնականում ավարտվել է, և օտարեկրյա ներդրումները մասնավորեցման գործընթացի մեջ փոքր տեղ են զբաղեցնում, օտարերկրյա ներդրումների ծավալը ներառում է մի շարք նոր հաստատված փոքր և միջին ձեռնարկությունների կապիտալը, ինչպես նաև վերաներդրումը:

2007թ. ***տնտեսության իրական հատվածում*** օտարերկրյա ներդրումների հոսքերի ծավալը (առանց պետական կառավարման և բանկային համակարգով ստացվածի) կազմել է **845.4 մլն ԱՄՆ դոլար** (աճը 34.6% 2006թ.-ի հետ համեմատությամբ), որից ուղղակի ներդրումները՝ **582.3 մլն ԱՄՆ դոլար** (աճը 34% 2006թ.-ի հետ համեմատությամբ):



*2008թ. կանխատեսվող

Առանց սեփականաշնորհման միջոցների, 2007թ. իրական հատվածում կատարված օտարերկրյա ընդհանուր ներդրումների ծավալը 2006թ.-ի համեմատությամբ աճել է **33.9%-ով**, իսկ ուղղակի ներդրումների ծավալը **32.9%-ով**:

2007թ. դիվերսիֆիկացված է եղել կատարվող ներդրումների կառուցվածքը, մասնավորապես՝ *իրական հատվածում* խոշորածավալ ներդրումներ են կատարվել հետևյալ ոլորտներում.

- Կապի ոլորտ՝ 261.2 մլն ԱՄՆ դոլար /*կապի ոլորտում ձևավորված մրցակցությունը նպաստել է այս ոլորտում կատարվող ներդրումների աճին*/
- Էլ. էներգիայի, գազի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում՝ 233.2 մլն. ԱՄՆ դոլար
- Հանքագործական արդյունաբերություն՝ 86.6 մլն ԱՄՆ դոլար
- Մետաղագործական արդյունաբերություն՝ 50.9 մլն ԱՄՆ դոլար
- Անշարժ գույքի հետ կապված գործառնություններ՝ 29.9 մլն ԱՄՆ դոլար

- Օդային տրանսպորտի գործունեություն՝ 24.3 մլն ԱՄՆ դոլար
- Սննդամթերքի և խմիչքների արտադրություն՝ 21.3 մլն ԱՄՆ դոլար
- Հյուրանոցային ծառայություններ՝ 19.3 մլն ԱՄՆ դոլար
- Բարձր տեխնոլոգիաներ՝ 18.1 մլն ԱՄՆ դոլար
- Շինարարություն՝ 5.6 մլն ԱՄՆ դոլար

2000--2007թ. Հայաստանում իրականացված օտարերկրյա ներդրումների ծավալը կազմել է **2939.1 մլն ԱՄՆ դոլար**, որից ուղղակի ներդրումները՝ **1978.5 մլն ԱՄՆ դոլար:**
1991-2007թ. Հայաստանում կատարված օտարերկրյա ընդհանուր ներդրումները կազմել են **3469.1 մլն ԱՄՆ դոլար**, իսկ օտարերկրյա ուղղակի ներդրումները՝ **2476.5 մլն ԱՄՆ դոլար:**

9. Ներդրումային միջավայրի բարելավում

2007թ.-ի դեկտեմբերին Համաշխարհային Բանկի Խմբի բազմաղոնոր Ներդրումային միջավայրի խորհրդատվական ծառայության կողմից, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության խնդրանքով, նախապատրաստվել և ներկայացվել է «Գործարարությամբ զբաղվելը Հայաստանում» բարեփոխումների հուշագիրը:
Բարեփոխումների հուշագրում ներկայացված են «Գործարարությամբ զբաղվելը» (Doing Business) ծրագրի կողմից տրված և բազմիցս քննարկման առարկա դարձած գնահատականների մանրամասն նկարագիրն ու բացահայտված խոչընդոտների կարճաժամկետ և երկարաժամկետ հեռանկարի առաջարկվող լուծումները:
Այդ նպատակով, ՀՀ վարչապետի մոտ 2008թ.-ի հունվարին անցկացվեց գործարար միջավայրի բարելավման հարցերի շուրջ խորհրդակցությունը, որին մասնակցում էին բոլոր շահագրգիռ մարմինների ղեկավարները: Խորհրդակցության արդյունքներով ՀՀ վարչապետը հանձնարարականներ տրվեց համապատասխան մարմիններին գործարար միջավայրի ներկայացված խոչընդոտների վերացման նպատակով առաջարկություններ ներկայացնելու վերաբերյալ:
Ի կատարումն այդ հանձնարարականի և ՀԲ-ի «Գործարարությամբ Զբաղվելը» (Doing Business) դասակարգման մեջ Հայաստանի զբաղեցրած դիրքը էականորեն բարելավելու նպատակով մշակվում է «**Գործարար միջավայրի բարելավման միջոցառումների» համապարփակ ծրագիր** *(բիզնեսի աջակցման կենտրոնի հիմնում, որը կաշխատի «մեկ պատուհանի, մեկ կանգառի» /"One stop shop"/ սկզբունքով, որոշ հարկատեսակների միավորում, հարկային և ֆինանսական հաշվետվությունների ընդունման էլեկտրոնային համակարգի ներդրում, մաքսային վարչարարության բարելավում, կորպորատիվ կառավարման ինստիտուտի զարգացում, կանոնադրության պարտադիր պահանջի, նվազագույն կանոնադրական կապիտալի և կնիքի թույլտվության պահանջի վերացում և այլն)*:

10. Ներդրումային քաղաքականության մշակման և իրականացման համար պատասխանատու գերատեսչություններ և կազմակերպություններ

Հետևյալ հաստատությունները պատասխանատու են ներդրումային քաղաքականության մշակման և իրականացման համար.

ՀՀ Առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունը (տես՝ նախարարության կանոնադրությունը - http://www.minted.am/am/structure.html)

Զարգացման Հայկական Գործակալությունը (ԶՀԳ), որը հիմնադրվել է Կառավարության կողմից, հիմք է ապահովում ներդրումների խթանման և պաշտպանության, ինստիտուցիոնալ ենթակառուցվածքների համար, և իրականացնում է ներդրումների և արտահանման խթանման ծրագրեր: Այն գործում է որպես «մեկ պատուհանի, մեկ կանգառի կենտրոն» (***"One stop shop")*** ներդրողների և արտահանողների համար և ներկայացնում է Հայաստանի տնտեսությունը՝ որպես ներդրումների համար գրավիչ վայր: Կառավարությունը նախատեսում է, որ ԶՀԳ-ն կունենա ներկայացուցչությունների և գործակալությունների համաշխարհային ցանց Հայաստանի համար գրավիչ շուկաներում:

Գործարարության աջակցման խորհուրդը, որը գործում է վարչապետի նախագահությամբ, գործարար համայնքին մոտ կանգնած կառույց է: Գործարարության աջակցման խորհրդի կազմում են Կառավարության ներկայացուցիչներ և գործարար համայնքի ռոտացիոն կարգով ընդգրկվող 50 ներկայացուցիչներ: Այն մի կառույց է, որն արձագանքում է գործարար համայնքի հիմնախնդիրներին և նպաստում է գործարար միջավայրի բարելավմանը:

Հայաստանի առևտրաարդյունաբերական պալատը հիմնադրվել է Հայաստանի տնտեսության զարգացումը, դրա ինտեգրացումը համաշխարհային շուկային և ներքին ու օտարերկրյա ներդրողների միջև առևտրային, գիտական և տեխնիկական կապերը խթանելու նպատակով: Հայաստանի առևտրի պալատը նաև աջակցում է ձեռնարկատիրության շուկայական ենթակառուցվածքի ստեղծմանը: